| | |
|---|---|
| Յովակիմ Գարբինեան | 1 |
| Այրի Աննայ Դանիէլեան Անդրէասեանց | 6 |
| Յակոբ Յարութիւնեան Ակուլեանց | 3 |
| Գրիգոր Օհաննէսեան Աղանովեանց | 1 |
| Յովհաննէս Սարգսեան Ախաքովեանց | 3 |
| Գրիգոր Օհաննէսեան Թիլեթովեանց | 3 |
| Գէորգ Թիլէթեանց | 5 |
| Ներսէս Աֆտանդիլեանց | 10 |
| Մելքոն Սարգսեան | 20 |
| Կարապետ Դալստեանց | 20 |
| Պօղոս Խաչիկեանց | 20 |
| Եղիսաբէթ կոյս Սարկաւագ Սարրաշեան | 1 |
| Կատարինէ Սարկաւագ Սարրաշեան | 1 |
| Գրիգոր Հայրապետեան | 2 |
| Սարգիս Մկրտչեան Խորդախբերեան | 2 |
| Յարութիւն Սարգսեան Իվանեանց | 6 |
| Այրի Կատարինէ Նազարեանց | 2 |
| Գրիգոր Եսայեան | 1 |
| Նազարէթ Թումասեան | 1 |
| Գէորգ Կրօտկեանց | 1 |
| Յովհաննէս Մովսէսեան Նեմցովեանց | 1 |
| Խաչատուր Սարգսեան Միրմանեանց | 2 |
| Այրի Մարիամ Մկրտչեան | 1 |
| Պօղոս Քիմճիտեանց | 2 |
| Անձինք երեք | 3 |
| Յովհաննէս Աղաբէկեան Դօդաղեանց | 3 |
| Յարութիւն Յովհաննէսեան Դօդաղեանց | 1 |
| Մկրտում Մաթէոսեան Ֆարրիկանթեանց | 3 |
| Գէորգ Մաթէոսեան Ֆարրիկանթեանց | 3 |
| Պետրոս Յովասափեան Պապովեանց | 2 |
| Ստեփաննոս Աւագեան | 5 |
| Գրիգոր Կարապետեան Քուրդեանց | 1 |
| Մովսէս Կարապետեան Քուրդեանց | 1 |
| Անյայտ ոմն | 1 |
| Յովհաննէս Արղանկուլեան | 3 |
| Եղբարք Ասատուրեանք | 10 |
| Եղբարք Բարալովեանց | 3 |
| Սայեաղ Ամիրեան | 1 |
| Ստեփան Թոսուզեան | 1 |
| Այրի Եղիսաբէթ Այվազեանց | 1 |
| Յովհաննէս Մինասեան | 3 |
| Յովակիմ Ստեփանեան | 1 |
| Սարգիս Գաբրիէլեան Պօպովեանց | 3 |
| Գալուստ Գէորգեան Պորտնովեանց | 1 |
| Յարութիւն Օհաննէսեան | 1 |
| Կարապետ Պապովեան | 1 |
| Յակոբ Աւետիսեան Սունտուկեանց | 3 |
| Յոյս Տէր Մելքիսեդեկեան Քալանթարեանց | 1 |
| Պօղոս Մելաքեանց | 2 |
| Մինաս Յովհաննէսեան | 1 |
| Յովհաննէս Գրիգորեան Ստեփանեան | 1 |
| Ծաղիկ Մելիկենցեան | 2 |
| Բունեաթ Մելիկենցեան | 3 |
| Յարութիւն Պապեխեան | 1 |
| Կարապետ Մարտիրոսեան Կոստինցեանց | 60 |
| Մարտիրոս Կարապետեան Կոստինցեանց | 15 |
| Հայ-Կաթոլիկ Անդրէաս Միսայէլեան Ժալալեանց | 25 |
| Այրի Մարգարիտ Մուղդուսեան | 1 |
| Գալուստ Փիլիպեան Ֆարրիկանթեանց | 1 |
| Թադէոս Փիլիպպոսեան | 1 |
| Ղազար Դաւթեան և եղբայրքն | 10 |
| Այրի Մանուշակ Մելքոնեան Պօղադովեան | 1 |
| Միքայէլ Սահարբէկեան | 10 |
| Գրիգոր Կանչարեանց | 1 |
| Այրի Կատարինէ Միսայէլեան Շաթիրեանց | 1 |
| Իսար Սերկէյեան Հալապեանց | 1 |
| Յովհաննէս Տէր Եսայեան Մարգանեանց | 5 |

---

## ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ
### ՀԱՅՈՑ ՍՂՆԱԽԻ

Յանցելում Սղնախի Հոգևոր Դպրոցի և Հոգաբարձութեան մասին բողոքագիր մի ստացաւ Խմբագրութիւնս. որոյ վերայ կարևոր քննութիւնը ըստ Հոգև. Բարձրագոյն հրամանի պէտք եղած միջոցներով կատարուելով՝ նոյն Դպրոցի Հոգաբարձութեան կողմանէ հետևեալ յայտարարութիւնը և բաւական գոհացուցիչ բացատրութիւնք կը տայ, ուստի և արժան կը համարեմք հաղորդել մեր ազգայնոց:

---

«Ձերդ Գերապատուութեան գրութիւնն, որ ի 12ն յունվարի 1871 ամի հմ. 2, ստացանք յ31ն յունվարի 1871 այսր ամի, որ բարեհաճել էիք

ուղղել այն դէպ ի մեզ Վեհափառ Կաթողիկոսի հրամանաւ պահանջելու մեզանից Գարթևեան ուսումնարանի ծի. գ հաշիւը 1860 թուականից սկըսած մինչ ի ներկայ 1871ը. բայց որովհետև սոյն այս ուսումնարանի վարչութիւնը մենք սկսել ենք 1868 թուականի յուլիսի 1ից միայն, վասնորոյ ներկայացնում ենք այս թերթի հետ և մեր հաշիւը ցուցակաւ միայն 1868 թուականի յուլիսի 1ից սկսած մինչև ներկայ 1871 թուականի յունվարի 1ը, որոյ պատասխանատուութեան մէջն ես ենք միայն։

Իսկ, Գերապատիւ Հայր, ինչ որ կը վերաբերի այն բողոքաւորի անտեղի և անհիմն գրութեանը՝ պէտք է ասենք, որ ոչ սակաւ տրտմութիւն պատճառեց մեզ. ըստ որում առ ուսումնարանն ունեցած սէրը և աշխատութիւնը ոչնչացնելով արհամարհանաց տակ գցեց մեզ մեր համայն ազգայնոց առաջև։—Հազիւ թէ այս վերջին տարիներում Սղնախի Հոգևոր ուսումնարանը զերծաւ այլ և այլ խռովութիւններից, որ պատահում էր, թէ հասարակութեան և թէ ուսուցիչների Հոգաբարձութեան հետ ունեցած անհամաձայնութիւններից.., հազիւ թէ անհետացան առաջուայ ցաւալի միջոցները, և ուսումնարանը շնորհիւ Ամենակարողին կարողացաւ փոքր ինչ յառաջադիմութիւն ցոյց տալ, որով մենք մեծ յոյսերի և շնորհակալութեան էինք սպասում համայն մերայնէից, ահա պատահում են մեզ արհամարհողներ և խայտառակողներ.... որոնք թողած իրանց աչքի գերանը, ուրիշի աչքի ծեղին են ցոյց տալիս...։ Այն ինչ նուէրների վերա է խօսում, որոյ գումարը մինչև 3300 ռուբլի է կազմում. այն ո՞ր տեղից է, որ մենք չը գիտենք։ Ճշմարիտ է, թէպէտ նախ—նըկակ Հոգաբարձուաց ժամանակը Սղնախ քաղաքեցի հանգուցեալ Լիանոզեանցի անուամբ նուիրել են 1000 ռուբլի, այլ և սորա հետ եղել են և ուրիշ նպաստամատոյցներ, որոնք իւրեանց ստորագրութեամբ առանձին մատենի մէջ խօստացել են նուիրել այլ և այլ ժամանակներում նշանակեալ դրամ յօգուտ ուսումնարանի (որ կայ մինչև ցայժմ առանց կարգադրութեան), միայն թէ, ինչքան մեզ յայտնի է, ստացածը ոչ այնքան, որքան պատուելի բողոքաւորը կը նշանակէ. իսկ Միրզայեանի նուիրատուութեան վերայ անգամ անուն չը կայ. ինչպէս է պատուելին իմացել և ո՞ր տեղից, մեզ յայտնի չէ։—Մենք զարմանում ենք, թէ այն Պ. Մ.... Տէր. Գ......, որոյ բնակութեան տեղը Տփխիսն է դարձած մանկութենից, ինչպէս իմացաւ մեր ուսումնարանի յառաջադիմութիւնը, Հոգաբարձուաց անուշադրութիւնը և կամ վարժապետաց անմէթոտիկական ուսում տալը. ինչ կերպ կարողացաւ նա արդեօք անձամբ տեղեկանալ այն ուսումնարանի վիճակի մասին, որը նրանից հեռու էր երկու օրուան ճանապարհաւ։ Այո, ինչպէս լսել ենք, եկել է նա այստեղ մի անգամ չորս տարուց առաջ, և հինգ բոպէ միայն խօսակցելով մեր մի ուսուցչի հետ, հեռացել է, այն ևս ուսումնարանի դասիկոնի վերայ ընտանեկան հանգամանքների մասին է եղել նոցա խօսակցութիւնը. հարցանում ենք աշակերտաց վերայ անգամ նայե՞լ է....։ Այն պարի գրութիւնը խռովարարների գրգման արդասիքն է միայն, այլ ևս ո՞չինչ։ Եւ ինչ հարկաւոր է մեզ զանազան փաստերով ճգել մեր բողոքաւորի անտեղի բարբանջմունքները և հաստատել մեր ճշմարտութիւնը, երբ բոլոր հանգամանքը արդէն վաղուց յայտնի է մեր Թեմակալ—Առաջնորդ Գեր. Մակար Ս. Արքեպիսկոպոսին, որ երկու անգամ այց լինելով (1865 և 1870) տեղւոյս սուրբ Սահակեան Հոգև. ուսումնարանին, ինքն անձամբ բարեհաճեց տեղեկանալ ուսուցչաց, ինչպէս և աշակերտաց յառաջադիմութեան գործին, և մանաւանդ այս վերջին անգամ 1870 թուականի Հոկտ. ամսում հարցաքննելով բոլոր աշակերտացը, արտաբերեց այս նշանաւոր խօսքերը. ‹‹Ես երբէ՛ք չունէի յոյս տեղւոյս ուսումնարանի աշակերտաց գրութիւնը այս աստիճանի բարելաւութեան մէջ տեսնելու››։

Գերապատիւ Հայր, մենք սրանով պարզերես ենք մեր սիրելի ազգայնոց առաջևը, ինչպէս և նորա սիրելի Գահակալին,—որ մեր Հոգաբարձութեան միջոցին այս ուսումնարանի վերայ չեն ազդել շատ ու շատ մրրիկներ, որչափ և մահաբեր էին նոքա...։ Ուսումնարանը այժմ վայելելով իւր անհրաժեշտ խաղաղութիւնը՝ արագ քայլերով առաջ է գնում, չը նայելով զանազան անակնունելի խոչնդոտներին ....

## Հաշուեցուցակ Մտից և Ծախուց Հ. Որ. Սէ. է 1էն յուլ. 1868 ամէ ց1ն յունվ. 1871 ամի, այլև ստորագրեալ Հոգաբարձուաց Գ. Շահբազեանց և Մ. Սահակեանց:

| ՄՈՒՏՔ | ՄՈՄ փ. | ՄՈՄ ֆ. | ԳՈՒՄԱՐ ռ. | ԳՈՒՄԱՐ կ. |
|---|---|---|---|---|
| Ի 1-էն Յուլիսի 1868 ամի ց1ն Յունվարի 1871 ամի, այն է երկու ամաց և կէս ամաց. | | | | |
| Ներկայացեալք գործակալութեան Աշխարհի Արքեպ. տէրոջ Տ. Սահակեանց յանձնեալ եղև մեզ դրամական մնաց ի Նախկին Հոգաբարձուաց. | | | | |
| Սպիտակ մոմ . . . . . | 2 | $31\frac{1}{2}$ | 103 | $12\frac{1}{2}$ |
| Դեղին մոմ . . . . . | 4 | 1 | 104 | 60 |
| Կիսայրեալ սպիտակ մոմ . | – | 11 | 4 | 40 |
| Կիսայրեալ դեղին մոմ . . | – | $20\frac{3}{4}$ | 4 | 15 |
| Դեղին կոշտ մոմ . . . | – | $10\frac{3}{4}$ | 5 | 90 |
| Այլ և | | | | |
| Ուխտաւորին Ս. Աստուածածնայ հանդերձ ի միջի եղեալ մոմովը . | | | 25 | 55 |
| Յովսէփ Ամիրխանեանցից . . . | | | 45 | – |
| Ս. Գէորգ եկ. երեցփ. Յարութիւնեանցից | | | 56 | 40 |
| Սղ. գրծկտր. Ս. քհնյ. Տ. Սահփիտոսեանցից | | | 20 | – |
| Գրիգոր Մարտինեանցից . . . . | | | 46 | – |
| Մ. Դաւթեանցից և Ա. Մինասեանցից | | | 4 | 80 |
| Նախկին Հոգ. տուածը ընդամենը | | | 419 | $92\frac{1}{2}$ |
| Ըստ զօրութեան Կոնսիստ. հանգուցեալ Մատթէոս Կաթ. տուեալ եղև ի Սղն. Ս. Կարապետ եկեղ. զաւհմանեալն վասն ուսում. վասն 1868, 1869 և 1870 ամաց | | | 360 | – |
| Նոյնպէս ի Ս. Գէորգա — Սղնախի վասն 1868, 1869 և 1870 ամաց . | | | 360 | – |
| Ի 1 էն յուլ. 1868 ամի ց1ն յունվ. 1871 ամի, այն է երկու ամեայ և կէս ամաց գոյացեալ եղեն ի տփոց ուխտաւորեաց, արդիւնք մոլթոց մատաղ. ևն. | | | 213 | 36 |
| Ի 1 էն յուլիսի 1868 ամի ց1ն յունվ. 1871 ամի, այն է երկու ամաց և կէս ամաց ի վաճառմանէ մոմոյ . . . | | | 2295 | 70 |
| Ընդ ամենն . . . | | | 3648 | $98\frac{1}{2}$ |

| ՄՆԱՑՈՐԴՔ Առ 1ն Յունվարի 1871 ամի | փ. | ֆ. | ռ. | կ. |
|---|---|---|---|---|
| ՊԱՀԱՐԱՆ ՄՈՄՈՑ | | | | |
| Սպիտակ մոմ . . . . | 5 | $22\frac{1}{2}$ | 194 | 60 |
| Դեղին մոմ . . . . . | 3 | $18\frac{1}{4}$ | 94 | $66\frac{1}{2}$ |
| Կիսայրեալ սպիտակ մոմ . | – | $28\frac{1}{2}$ | 11 | 40 |
| Կիսայրեալ դեղին մոմ . . | 2 | $3\frac{1}{2}$ | 16 | 70 |
| Կոշտ մոմ դեղին . . . | – | $4\frac{1}{2}$ | 2 | 25 |

| ԾԱԽՔ | ԳՈՒՄԱՐ ռ. | ԳՈՒՄԱՐ կ. |
|---|---|---|
| Որոնց ծախսուել է 1-էն Յուլիսի 1868-ամի ց1ն Յունվարի 1871 ամի, այն է երկու ամաց և կէս ամաց: | | |
| Ի 1էն յուլ. 1868 ամի ց1ն յունվարի 1869 ամի, այն է վեց ամսոց ծախք է եղեալ ի վերայ ռոճկ. ուսուցչաց պահապանաց և այլոց ծախուց (կաւիճի, սպունգինն). . . . . . . . | 488 | $22\frac{1}{2}$ |
| Ի 1էն յուլ. 1868 ամի ց1ն յունվարի 1869 ամի, այն է վեց ամսոց տուեալ եղև ռոճիկ վերակացուաց կրպակի և վարձ մոմ թափողի . . . . . | 29 | — |
| Ցընթացս 1869 ամի տուեալ եղև ռոճ. ուսուցչաց պահապանի, վառելափայտի սարոց ծախուց . . . . . . | 1119 | 42 |
| Ցընթացս այսր 1869 ամի տուեալ եղև ռոճիկ վերակացուաց կրպակի և վարձ մոմ թափողի . . . . . . . | 110 | — |
| Ցընթացս 1870 ամի տուեալ եղև ռոճ. ուսուցչաց, պահապանի . . . . | 1154 | — |
| Ցընթացս այսր 1870 ամի տուեալ եղև ռոճ. վերակացուաց կրպակին և վարձ մոմ թափողին . . . . . . | 126 | — |
| Ի վերայ վերանորոգութեան վառառանին Ուսումնարանի . . . . . | 16 | $42\frac{1}{2}$ |
| Ի 1էն յուլ. 1868 ամի ց1ն յունվարի 1871 ամի, այն է երկու ամաց և վեց ամսոց ծախք է եղեալ ի վերայ պատրուգաց, դպրեակի մանմալաճառացն, չափերական մատնից Նասոմխարայ եկեղեցւոյն, փայտի, ածխոյ, աւելաց և այլոց նոյնպիսեացն . . . . . | 169 | 70 |
| Ընդ ամենն . . . | 3212 | 77 |

| ԱՊԱՌԻԿՔ | ռ. | կ. |
|---|---|---|
| Ս Կարապ. եկ. երեցփ. Նասոմխ. եկեղ. ժամկոչի և Լազոգեղի հասար. վրայ . | 82 | 60 |
| Նասոմխարայ Աստուածած. եկ. Ներկայ ժամկոչի վրայ մոմի փող . . . . | 20 | — |
| Սղ. Ս. Աստ. ուխտ. վերակ. վրայ (Նախկ.) | 14 | — |
| Ընդ ամենն . . . | 436 | $21\frac{1}{2}$ |
| Բացի սրանից նախկին Հոգաբարձուներից յանձնեալ եղև մեզ ապառիկք, որ է զանազան անձանց վրայ մուրհակագրերով, ընդ ամենն . . . . . | 629 | $12\frac{1}{2}$ |

ԾԱՆՕԹ: 1) Տեսուչն, որ միևնոյն ժամանակ վարում է ուսուցչ. պաշտօն (Ռուս. լեզուի Թուաբ. և Աշխ.) ստանում է տարեկան ռոճիկ 492 ռ. 2) Ուս. Հայկ. լեզուի և Հ. Պատմութեան ստանում է 560 ռ. 3) Կրօնուսոյցն ստանում է 120 ռ: Աշակերտաց Թիւը երկու դասատանց մէջ ընդամենն 76: